Հավելված
Թումանյան համայնքի ավագանու
2024 թվականի փետրվարի 07-ի
N 5--Լ որոշման

Կ Ա Ր Գ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ ԵՎ (ԿԱՄ) ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքում (այսուհետ՝ համայնք) տեղական տուրք և (կամ) վճար վճարողների հաշվառման գործընթացը, հաշվառման գրանցամատյանների վարման կարգը, գրանցամատյանների ձևերը:

2. Տեղական տուրք և (կամ) վճար վճարողների հաշվառումն իրականացվում է տեղական տուրք և (կամ) վճար վճարողների գրանցամատյաններում (այսուհետ՝ գրանցամատյան), որոնք վարվում են ըստ տեղական տուրքերի և վճարների առանձին տեսակների:

3. Գրանցամատյանները դասակարգվում են՝

1) տեղական տուրք վճարող ֆիզիկական անձանց հաշվառման գրանցամատյաններ (Ձև 1),

2) տեղական վճար վճարող ֆիզիկական անձանց հաշվառման գրանցամատյաններ (Ձև 2),

3) տեղական տուրք վճարող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի հաշվառման գրանցամատյաններ (Ձև 3),

4) տեղական վճար վճարող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի հաշվառման գրանցամատյաններ (Ձև 4):

4. Գրանցամատյանները վարվում են Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմի (այսուհետ՝ աշխատակազմ) համապատասխան ոլորտում՝մասնագետի պատասխանատվությամբ:

5. Գրանցամատյանները վարվում են ըստ տարիների:

6. Տեղական տուրք և (կամ) վճար վճարողների հաշվառումը կարող է իրականացվել փաստաթղթային կամ էլեկտրոնային ձևով:

7. Փաստաթղթային ձևով վարվող գրանցամատյանները կարվում և կնքվում են աշխատակազմի կնիքով:

8. Գրանցամատյաններում առնվազն պետք է ներառվեն հետևյալ տվյալները՝

1) գրանցամատյանի վարման տարեթիվը,

2) տուրքի և (կամ) վճարի տեսակը,

3) գրանցամատյանը վարող աշխատակազմի համապատասխան ոլորտի անվանումը,

4) գրանցամատյանի վարման համար պատասխանատու անձի անուն, ազգանունը (ստորագրությունը),

5) տուրք և (կամ) վճար վճարողների գրանցման հերթական համարը,

6) համայնքի ղեկավարի որոշման համարը և տարեթիվը, որի հիման վրա գանձվել է տուրք և (կամ) վճար (լրացվում է առկայության դեպքում),

7) տուրքի և (կամ) վճարի չափը,

8) ժամանակահատվածը, որի համար վճարվել է տուրք և (կամ) վճար,

9) տուրք և (կամ) վճար վճարող ֆիզիկական անձանց դեպքում՝ գրանցամատյաններում (Ձև 1, Ձև 2) ներառվում են նաև՝

ա. ֆիզիկական անձի անունը, ազգանունը (տվյալ լինելու դեպքում՝ հայրանունը),

բ. հաշվառման հասցեն,

գ. անձը հաստատող փաստաթղթի տվյալները,

10) տուրք և (կամ) վճար վճարող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ գրանցամատյաններում (Ձև 3, Ձև 4) ներառվում են նաև՝

ա. իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ անվանումը, կազմակերպաիրավական տեսակը,

բ. գրանցման հասցեն,

գ. գործունեության հասցեն,

դ. իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցման համարը,

ե. հարկ վճարողի հաշվառման համարը.

9. Համապատասխան ոլորտում տվյալ տարվա համար փաստաթղթային ձևով վարված գրանցամատյանները ստորագրվում են մասնագետի կողմից և մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը հանձնվում են աշխատակազմի արխիվ:

10. Գրանցամատյաններ կարող են վարվել նաև այն համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում (ՀՈԱԿ), որտեղ գանձվում է տուրք և (կամ) վճար.

11. ՀՈԱԿ-ներում տվյալ տարվա համար փաստաթղթային ձևով վարվող գրանցամատյանները ստորագրվում են տնօրենի կողմից և մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը հանձնվում են աշխատակազմին:

12. Գրանցամատյանների Ձև 1-ը, Ձև 2-ը, Ձև 3-ը և Ձև 4-ը կցվում են:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ ԵՎ (ԿԱՄ) ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

«Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 4-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներից ելնելով անհրաժեշտություն է առաջացել հաստատել Թումանյան համայնքում տեղական տուրք և (կամ) վճար վճարողների հաշվառման կարգը:

«Թումանյան համայնքում տեղական տուրք և (կամ) վճար վճարողների հաշվառման կարգը հաստատելու մասին» Թումանյան համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

«Թումանյան համայնքում տեղական տուրք և (կամ) վճար վճարողների հաշվառման կարգը հաստատելու մասին» Թումանյան համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Թումանյան համայնքի բյուջեում եկամուտների ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ